

ՔՈՒՉԱԿԵԱՆ ՆՈՐ ՏԱՂԱՇԱՐՔ ՄԸ

Տաղաշարքը զոր կը հրատարակեմ՝ արտագրած եմ Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի թիւ 2323 ձեռագրէն:

Քուչակեան այս տաղաշարքը որ եւ է խորագիր չի կրեր: Անկէց ինչ ինչ քառեակներ հրատարակուած են Պ. Ա. Չօպանեանի «Նահապետ Քուչակի Գիւանը»-ին մէջ (Փարիզ, 1902) խրատական տաղերու շարքին, իսկ մնացեալները որքան որ գիտեմ անտիպ են. աչքի առաջ չունիմ Հ. Ն. Ալկինեանի՝ Սիմոն Յակոբեանի Արեգներուն մէջ հրատարակածները:

Քուչակեան տաղերը շատոնց հոս ու հոն կը հրատարակուին, բայց երբեք չեն հրատարակուիր ձեռագրաց մէջ գտնուած շարքով: Պ. Չօպանեան «Անահիտ»-ի նոր շրջանի թիւերուն մէջ, իմ ձեռագրաց հաւաքածոյիս մէկ տաղարանին (1681էն) տաղաշարքէն եւ ՏէվէՏեանի օրինակութիւններէն ընտրովին կը հրատարակէ, սակայն հոն չի պահուիր տաղաշարքին ձեռագիր-

ներուն մէջ պահուած ձեւը որ բնագրի վերստացման ապագայ աշխատանքներուն համար կարելոր է: Այս տաղերը որ իրապէս քառեակներ են, երբեմն իմաստի տեսակէտով կը կազմեն շարք մը թէեւ քիչ շատ անկախ քառեակներով, ըստ իս այս շարքերը կամ շարքը պէտք է պահպանել, եւ բնագիր մը պատրաստելու համար ասոնք կարելոր են:

Էս՝ երուսաղէմեան այս տաղաշարքը՝ եղածին պէս կը պահեմ, ոչ մէկ յաւելում կամ յապաւում ընելով, միայն լուսանցքի տակ Պ. Չօպանեանի եւ իմ հրատարակութեանց անհամաձայնութեան պահուն՝ աւոր հրատարակածն ալ կը զետեղեմ, իմ կողմէս ակնարկութիւններով: Իսկ այն քառեակները որոնք լուսանցքին տակ ծանօթութիւն չունին՝ Քուչակի հրատարակեալ Գիւանին մէջ կը պակսին, եւ կրնան այլուր ալ հրատարակուած չըլլալ:

- Ա. — Երկուս ի մէկ տեղ բերած, զերթ զնկեր կասեն թէ պահէ,
Ու չորս բնութիւն օտար հետ իրաց կասեն թէ սազէ,
Հինկ դուռն է ի բաց թողած, գայդ ամուր կասեն թէ փակէ,
Զիս հոգս ի յայտոց միջին, զերդ կրակ գմոմ կու հալէ:
- Բ. — Զերկուսս ընկերանց պահեմ, մէկըս հող մէկըս հոգի է,
Հոգիս թէ ի վեր բարշէ, հողըս ծանր ի վայր կու հակէ,

1. Հրատարակուած Նահապետ Քուչակի Գիւանը. խրատական եւ Այլարանական երգեր, թիւ է:

Զերկուսն ի մէկտեղ բերած զէտ ընկեր կ'ասեն թէ պահէ,
Ու չորս բնութիւնս օտար հետ իրաց կ'ասեն թէ սազէ,
Հինկ դուռն է ի բաց թողած, գայդ ամուր կ'ասեն թէ փակէ,
Հոգիս իմաստնոց միջին զէտ կրակ որ գմոմն հալէ: